«Երևանի Լեոյի անվան N5 ավագ դպրոց»

Ուսուցիչների պետական պարտադիր
վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Դասղեկի/դասվարի ժամերի բովանդակությունն ու նշանակությունը

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Մնացականի Շամիրյան

(Արարատ գյուղի թիվ 3 միջն. դպրոցի դասվար)

Բովանդակություն

ԴԱՍՎԱՐԻ, ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն----------

Դասղեկի դերը դաստիարակության գործընթացում---------- 4

Դասղեկի գործառութային պարտականությունները---------- 5

Դասղեկի աշխատանքում առաջարկվող ուղղությունները---------- 11 Դասղեկի ժամերի կազմեկարպումն ու անց-կացումը---------- ---
---------- 26

Դասղեկի ժամերի կազմակերպման ու անցկացման մեթոդիկան---------- 28

Դասղեկի ժամերի նշանակությունը------ 29

Եզրակացություն---------- 32

Օգտագործված գրականություն----------

Ներածություն

Նորի որոնումը դաստիարակության համակարգում անհ-րաժեշտ է, կարևոր ու պարտադիր։ Այսօրվա դպրոցականը պետք է սովորի, աշխատի և ապրի ձևավորվող քաղաքացիական հասարակության մեջ, նոր գաղափարա-խոսության, շուկայական հարաբերությունների, ինֆորմա-ցիոն տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում։ Հարկ է նշել, որ նորը դպրոցականի հոգեբանության նորովի ըմբռնումն է, նրա վրա արդյունավետ եղանակներով ներգործելը։ Ուսուցիչը, դասղեկը, մանկավարժական գիտական միտքը ամուր թելերով պետք է կապված լինեն ժամանակակից դպրոցականների կյանքի հետ, կարդան նրանց կարդացածը, լսեն և վերլուծեն նրանց լսածը, աշխարհին նայեն նրանց աչքերով։ Այսօրվա դպրոցականների առջև պետք է կանգնեն այնպիսի մանկավարժներ, որոնք պետք է ունենան պետական և ազգային մտածողություն, կայուն համոզմունքներ, վերլուծական, կազմակերպչական ընդունակություններ, հաղորդակցման, ապրումակցման և խոսքի բար-ձրր կուլտուրա։ Վերջին տարիների ընթացքում զգալիորեն աճել է ինֆորմացիայի հոսքը, որն էլ ազդում է դպրոցականների զարգացածության և դաստիարակվածության ընդհանուր մակարդակի վրա։Նրանք շատ բան գիտեն, շատ բանի են ձգտում և մեծ պահանջներ են դնում իրենց դաստիա-րակների առջև։ Այս իմաստով դասարանի ղեկավարի գոր-ծունեությունը դպրոցում առանձնահատուկ տեղ է զբաղեց-նում և անընդհատ պահանջում է նոր մոտեցումներ։ Այդ պատճառով էլ որոշեցի ընտրել «Դասղեկի, դասվարի ժա-մերի բովանդակությունն ու նշանակությունը»թեման և ու-սումնասիրել։

Դասղեկի դերը դաստիարակության

Գործընթացում

Դաստիարակությունը մեծ գործ է, նրանով է վճռվում մարդու ճակատագիրը։

Դաստիարակությունը՝ կրթության կարևոր բաղադրիչնե-րից է: Ժամանակակից դաստիարակության հիմնական խնդիրներն են՝ անհատի մոտ քաղաքացիական և իրավական-պատասխանատվության ձևավորումը, հոգևոր և մշակութային արժեքների գնահատումը, նախաձեռնության և ինքնուրույնության զարգացումը: Դաստիարակության համակարգը մարդու վրա ազդեցության գործընթացի էության, սկզբունքների, մեթոդների, միջոցների և ձևերի միասնությունն է: Այդ գործընթացում իր ուրույն տեղն ունի դասղեկը, որի աշխատանքը երեխաների դաստիրակության գործում ներկա պայմաններում բավականին բարդացել է: Նա է կազմակերպում երեխաների ակտիվ ստեղծագործական գործունեությունը, նրան է վստահված երեխաների իրա-վունքների ու հետաքրքրությունների պաշտպանությունը, նրանց զարգացման ընթացքի հակողությունը, ինքնահաս-տատման համար անրաժեշտ պայմանների ստեղծումը, ինքնազարգացմանն ու ինքնադաստիարակմանը նպաստե-լը և ծագած խնդիրների դեպքում նեցուկ լինելը: Իսկ որո՞նք են դաստիրակության հաջողության կարևոր պայմանները: Առաջին հերթին՝ երեխաների նկատմամբ ունեցած սերնու քնքշանքը, ամեն հարցում նրանց օգնելու պատրաստակա-մությունը, մասնագիտական գիտելիքների ու հմտություն-ների կատարելագործումը և դաստիարակության նոր մե-թոդների մշտական որոնումն ու կիրառումը:Մանկավար-ժի աշխատանքը գործառույթների մի համակարգ է, որի գըլ-խավոր նպատակներից մեկը մարդու դաստիարակությունն է, իսկ դաստիարակության դժվարին գործում իր լուրջ ներ-դրումն ունի դասղեկը:Շատ հաճախ մարդկանց դպրոցա-կան հիշողությունները կապված են հենց դասղեկի հետ այն դասղեկի, որն օժտված է մանկավարժի, հոգեբանի, դաս-տիարակի, հոգեթերապևտի հատկանիշներով, որի հետ ա-շակերտները կիսում են իրենց ուրախությունն ու տխրու-թյունը, վստահում իրենց մանկական

գաղտնիքները:Դաս-ղեկի գործունեությունը դաստիարակության ընդհանուր գործընթացի մի մասն է, ուստի նրա արդյունավետությունը շատ բանով կախված է նրա պլանավորվածությունից և հա-մակարգվածությունից:Դասղեկի աշխատանքի համակար-գը ենթադրում է կանխատեսման, պլանավորման, կազմա-կերպման, կարգավորման, ախտորոշման, վերահսկման գործառույթներիզուգակցումը դպրոցականների պրակտիկ գործունեության կազմակերպման ձևերի ու մեթոդների հետ:Ինչպե՞ս արդյունավետ դարձնել դասղեկի աշխատան-քը, դասարանի հետ աշխատելիս ի՞նչ ուղղություններ կա-րելի էընտրել, ի՞նչ մեթոդներով դրանք իրագործել:

Դասղեկի գործառութային պարտականությունները

Դասղեկի հիմնական պարտականությունները որոշված են հանրակրթական դպրոցի կանոնադրությամբ: Դասղեկի հիմնական գործառույթն ամրակցված դասարանում դաստիարակչական ներգործությունների կազմակեր-պումը, խթանումն ու կոորդինացումն է:Դասղեկը ձևավո-րում է աշակերտական կոլեկտիվը, ուղղություն տալիս նրա աշխատանքին, համաձայնեցնում դասարանում դասավան-դող ուսուցիչների ուսումնադաստիարակչական աշխա-տանքը, կոորդինացնում ուսուցիչների և աշակերտների գործունեությունը, պլանավորում է դասարանի աշակեր-տական կոլեկտիվի, ծնողների հետ տարվող աշխատանքը, կազմակերպում ու կարգավորում է բազմակողմանի կապե-րը արտաքին աշխարհի հետ:Նա արտաուսումնական և արտադասարանական աշխատանքների միջոցով նպաս-տում է սովորողների աշխարհայացքի և ակտիվ կենսադիր-քի ձևավորմանը: Դասղեկի կարևորագույն

գործառույթը սովորողների մեջ ուսման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի և ինքնուսուցման,ինքնակրթության ռեֆ-լեքսային ընդունակությունների դաստիարակումն է:Դաս-ղեկը հոգ է տանում իր դասարանի աշակերտների առող-ջության պահպանման ու ամրապնդման մասին, ձգտում է ինտեգրացնել դպրոցի և ընտանիքի դաստիարակչական աշխատանքը:

Դասարանի ղեկավարը (դասղեկը)

ա) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը, անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն

բ)դաստիարակչական աշխատանք է տանում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ, գ)իրականացնում է դասարանի համար սահմանված գոր-ծավարությունը, հաստատության տնօրինությանը ներկա-յացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկություններ, դ) կազմակերպում է սովորողների ֆիզիկական զարգացմա-նը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը, ե)հաստատության մանկավարժական խորհրդի քննարկ-մանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը, զ)արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն ձեռնարկումները, որոնք կարող են սովորողի առողջու-թյան, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների կենսագոր-ծումը:

Դասղեկի պարտականությունների մեջ մտնում են հետևյալ դրույթները.

Սովորողների առողջության, կենսունակության պահպա-նումը

ա)պատասխանատվությունը դասարանի աշակերտների առողջության և կյանքի համար,

բ)ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմա-կերպման ժամանակ սովորողների անվտանգության ապա-հովումը,

գ)մանկական կոլեկտիվում սանիտարահիգիենիկ պա-հանջների պահպանման վերաբերյալ աշխատանքի կազ-մակերպումը,

դ)երեխաների առողջության պահպանման համար անվը-տանգության կանոններին հետևելը,

ե)երեխաների առողջական վիճակի ուսումնասիրությունը,
զ)դպրոցական և ազատ ժամերի ռեժիմի պահպանման նը-պատակով ուսուցողական աշխատանքի կազմակերպումը դասարանի աշակերտների հետ:

է)երեխաների ուսումնական ծանրաբեռնվածության ու-սումնասիրությունն ու կարգավորումը,

ը)այցելություն հաճախակի հիվանդացող և դասերից բա-ցակայող երեխաներին և ուսումնական հարցերով օգնու-թյան կազմակերպումը:

Սովորողների ուսումնական գործընթացի կազմակեր-պումը

ա)աշակերտների հաճախումների և արտադասարանա-կանխմբակներին մասնակցության հսկողությունը,

բ)վերահսկողությունը դասարանի աշակերտների առաջա-դիմության ուղղությամբ,

գ)օրագրերի ստուգումը,

դ)համագործակցությունը դասավանդող ուսուցիչների հետ,

ե)դասարանի աշակերտների ձեռքբերումների, հաջողու-թյունների և բացթողումների ուսումնասիրությունը,

զ)երեխաների ուսումնական հետաքրքրությունների պաշտպանությունը

Սովորողների արտադասարանական գործունեու-թյան կազմակերպումը

ա)սովորողների հետաքրքրությունների ու նախասիրու-թյունների ուսումնասիրությունն ու դրանց զարգացմանն անհրաժեշտ պայմանների ապահովումը,

բ)հաշվի առնելով աշակերտների կարողություններն ու հը-նարավորությունները՝ արտադասարանական հետաքըր-քիր աշխատանքների կազմակերպումը,

գ)աշխատանքի կազմավերպումը առավել «դժվար» երե-խաների հետ

դ)աշխատանքը դասարանի ակտիվի հետ,

ե)աշակերտների մոտ արատավոր երևույթների կանխար-գելման նպատակով բազմաբնույթ աշխատանքների կազ-մակերպումը,

զ)երեխաների նախաձեռնությունների և ինքնազարդար-ման ձգտումների նկատմամբ ուշադրությունն ու օգնու-թյունը:

Համագործակցությունն աշակերտների ընտանիքների հետ

ա)աշակերտների անձնական գործերի և նրանց առողջա-կան վիճակի ուսումնասիրությունը,

բ)ծնողական կոմիտեի ստեղծումն ու նրանց հետ համա-գործակցությունը,

գ)ծնողական ժողովների կանոնավոր անցկացումը, **դ)**երեխաների կենսակերպի, նրանց ընտանիքների սոցիա-լական պայմանների ուսումնասիրությունը,

ե)սոցիալապես անապահով ընտանիքների հաշվառումը,

զ)խնդիրներ ունեցող ընտանիքների հայտնաբերումը, իրա-վապահ մարմինների և հասարակության ուշադրության հրավիրումը նման ընտանիքների խնդիրների լուծման վը-րա,

է)դասարանի աշխատանքներին ծնողների ներգրավումը ննրանց հետ միասին միջոցառումների կազմակերպումը,

ը)ծնող-երեխա-ուսուցիչ փոխհարաբերության և կապերի ամրապնդումը։

Համագործակցությունը հոգեբանի հետ

ա)սովորողների անհատական առանձնահատկություննե-րի ուսումնասիրությունը, փոփոխությունների գրանցումը օրագրում,

բ)նոր աշակերտների դասարանական կոլեկտիվին ընտե-լացնելը,

գ)երեխաների ստեղծագործական ընդունակությունների, ինտելեկտուալ զարգացվածության, ուսումնական կարո-ղություններիհմտությունների ձևավորման աստիճանի ու-սումնասիրությունը, և հմտությունների ձևավորման աստի-ճանի ուսումնասիրությունը

դ)աշակերտների դաստիարակվածության մակարդակի ուսումնասիրությունը և դաստիարակչական աշխատանք-ների ճշգրիտ կազմակերպումը,

ե)մանկական կոլեկտիվում տիրող մթնոլորտի և աշա-կերտների միջանձնային հարաբերությունների ուսումնասիրությունը,

զ)աշակերտների առաջնորդական հատկանիշներիուսում-նասիրությունը,

է)աշակերտների շրջապատի ուսումնասիրությունը,

ը)դասարանի սոցիալական անձնագրի ստեղծումը, **թ)**դասարանի բնութագրի հիման վրա աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման ձևերի ու մեթոդների ընտրությունը,

ժ)ծնողների համար հոգեբանական խորհրդատվության կազմակերպումը,

ի)դասարանում հոգեբանական դասերի կազմակերպումն ու անցկացումը։

Համագործակցությունը սոցիալական մանկավարժ-ների հետ .

ա)համատեղ այցելությունները խնդիրներ ունեցող ընտա-նիքներին,

բ)երեխաների իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ նյութերի պատրաստումը,

գ)երեխաների իրավունքների ոտնահարումների կանխար-գելմանն ու վատ սովորությունների վերացմանն ուղղված միջոցառումներին սոցիալական մանկավարժի ներգրավու-մը։

Դասղեկի աշխատանքում առաջարկվող ուղղություններ

<u>Աշակերտների առողջության պահպանում</u> Առաջին և ամենագլխավոր ուղղությունը կատարվում է ա-շակերտի ֆիզիկական և մտավոր առողջության պահպա-նումը։ Դպրոցի և դասղեկների վրա է դրված աշակերտների ֆիզիկական զարգացման համար նորմալ պայմաններ ստեղծելու մասին հոգ տանելը։Դասղեկը լուրջ դեր կարող

է խաղալ դպրոցականներին անձնական և հասարակական հիգիենայի հմտություններ պահպանելու գործում, նրանց սանիտարահիգիենիկ իրազեկության վարժեցնելու գոր-ծում: Իհարկե, այդ հարցը վճռվում է ամենից առաջ ընտա-նիքում՝ ծնողների, ընտանիքի ավագ անդամների հսկողու-թյամբ, բայց դասղեկը պարզաբանում է անձնական ու հա-սարակական հիգիենայի կանոններիպահպանման ան-հրաժեշտությունը, այդ հարցերի վերաբերյալ գործնական խորհուրդներ է տալիս: *Այս ուղղությամբ աշխատելիս անհրաժեշտ է.*

- համագործակցել դպրոցի բժշկի հետ՝ դասարանի աշա-կերտների ֆիզիկական ու առողջական վիճակը ուսումնասիրելու նպատակով, նրա հետ միասին աշակերտների համար անցկացնել զրույցներ, զարգացնել արտակարգ իրավիճակներում ճիշտ կոմնորոշվելու կարողություններ և հըմ-տություններ,
- սովորեցնել՝ ինչ է առողջ ապրելակերպը,
- կազմակերպել երեխաների ֆիզիկական զարգացման և առողջության պահպանման ակտիվ միջոցառումներ՝ մրցույթներ, էքսկուրսիաներ, արշավներ, օլիմպիական խաղեր, որոնք կարող են դառնալ ավանդական, աշակերտների առողջության պահպանման նպատակով կատարել դպրոցական և արտադասարանական միջոցառումների ժամանակ հատուկ դաստիարակչական աշխատանքներ, երեխաների մոտ ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և ընդհանրապես սպորտային պարապմունքների նկատմամբ,
- աշակերտների մոտ սեփական առողջության մասին ճիշտ կարծիք ձևավորել,
- ուսումնասիրել դասարանի աշակերտների ֆիզիկական և հոգեկան առողջական վիճակը, աշակերտների զարգացման առանձնահատկությունները տարբեր տարիքային փուլերում, առողջական շեղումները, նրանց ազդեցությունը աշակերտի

ուսման վրա և նրա տկարության պատճառները, ապա դպրոցի տնօրինության հետ համատեղ կազմակերպել երեխաների առողջական վիճակի, ուսումնական և արտաուսումնական գործունեության բարելավման ծրա-գիր,

- ուսման գործընթացում ուսումնասիրել աշակերտների ծանրաբեռնվածությունը և նրա ազդեցությունը երեխայի առողջության վրա,
- անցկացնել քննարկումներ սանիտարահիգիենիկ պահանջների, դասարանական և տնային աշխատանքների չափաքանակի և տնային աշխատանքներին հատկացված ժամաքանակի վերաբերյալ, անձնական հիգիենայի վերաբերյալ, բացատրել ալկոհոլի, նիկոտինի, թմրանյութերի և ՁԻԱՀ-ի հետևանքները մարդու օրգանիզմի վրա,
- անցկացնել կանխարգելիչ աշխատանքներ՝ ինչպես խուսափել դժբախտ պատահարներից,
- սերտորեն համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ, ներգրավել նրան ծնողների և երեխաների համար կազմակերպվող թեմատիկ խորհրդատվություններին՝ կապված երեխաների ֆիզիկական առողջության պահպանման խնդիրների հետ,
- համագործակցել ծնողների և մյուս ուսուցիչների հետ,
- համագործակցել արտադպրոցական հաստատությունների հետ՝ մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով։

<u>Աշակերտների հաղորդակցման և համագործակցու-թյան կարողությունների և հմտությունների զարգա-ցում</u>

Համագործակցության արդյունավետ կազմակերպումը նը-պաստում է անձի զարգացմանն ու անհատականության ձևավորմանը, քանի որ այն ձևավորվում է մարդկանց հետ շփման արդյունքում,որի արդյունքում մենք ավելի լավ ենք հասկանում ինքներս մեզ։ Այն

անհատները, որոնց ներանձ-նային և միջանձնային հմտությունները զարգացած չեն, թյուր փոխհարաբերություններ ունեն շրջապատի հետ և հակված են իրենց մասին կազմել ոչ ճիշտ ու թերի կարծիք: Արդյունավետ փոխհարաբերվել կարողանալու համար էա-կան են իրական ինքնագնահատականը,սեփական և ուրիշ-ների զգացմունքները հասկանալը, դիտարկումներ կատա-րելը, արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել կա-րողանալը: Դասղեկի աշխատանքում կարևոր տեղ է գրա-վում փոխհարաբերությունների ճիշտ կազմակերպումը ու-սուցչի ու աշակերտի, ուսուցչի ու ծնողի, աշակերտի ու ծը-նողի և, ընդհանրապես, աշակերտների միջև: Կազմակեր-պելով այս աշխատանքը՝ մանկավարժը պետք է զարգացնի երեխաների մոտ արդյունավետհամագործակցության և հաղորդակցման կարողություններ և հմտություններ: Կան-տը իր աշխատություններից մեկում ասել է. «Համագործակ ցության գլխավոր պահանջն է հաղորդակցման արդյուն-քում բացահայտել մարդու անհատականությունը»: Երե-խան պետք է հասկանա, որ անհատի համար առաջին հեր-թին կարևոր է պատվի և արժանապատվության արտահայ-տումն ու պահպանումը:*Այս ուղղությամբ աշխատելիս անհրաժեշտ է.*

- ✓ աշակերտների հետ միասին ուսումնասիրելմարդկայինհարաբերությունների պատմական փորձը, նրանց դերն ու նշանակությունը ապագա սերունդների համար,
- ✓ ստեղծել դրական հաղորդակցման միջավայր՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր աշակերտին ազատ արտահայտելու իր զգացմունքները, ծնողներին ու երեխաներին ներկայացնել համագործակցության ակտիվ ձևերը, կազմակերպել հանդիպումներ, զրույցներ և բանավեճեր,

- ✓ ուսումնասիրել կոլեկտիվում յուրաքանչյուր աշակերտի դերը, նրա փոխհարաբերությունների հետ կապված խնդիրները և գտնել այդ խնդերների լուծման ուղիները,
- ✓ ուսումնասիրել ընտանիքում երեխայի և ծնողների փոխհարաբերությունները, բացահայտել առկա խնդիրները և նպաստել դրանց վերացմանը,
- ✓ ուսումնասիրել աշակերտների հարմարվածությունը դպրոցին, դասարանին և, եթե գոյություն ունեն որոշակի խնդիրներ, այդ խնդրի շուրջ տանել աշխատանքներ,
- ✓ հետազոտել երեխայի դերը մանկական կոլեկտիվում, նրա հարաբերություններն իր համադասարանցիների ու հասա-կակիցների հետ,
- ✓ թրեյնիգների, հաղորդակցման ժամերի, խաղերի և բանավեճերի միջոցով օգնել աշակերտներին՝ ավելի սերտորեն համագործակցելու միմյանց հետ,
- ✓ ուսուցման կրտսեր և միջին փուլերում անցկացնել բարոյագիտական գործնական աշխատանքներ, բարձր դասարաններում կազմակերպել դասղեկական ժամեր՝ երեխաների մոտ հետագա ինքնահաստատման և համագործակցելու կարողություններ մշակելու նպատակով:

<u>Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում</u>

Մեծ նշանակություն ունի երեխայի բարոյական դաստիարակությունը: Այս ուղղության գլխավոր նպատակն է՝

- ❖ բացատրել աշակերտներին մարդկության գոյության իմաստը, գնահատել իր և մյուսների գոյության կարևորությունն ու նշանակությունը, արժևորել պատմական անցյալի ու ապագայի դերը աշակերտների բարոյական հատկանիշների ձևավորման գործում:

- երեխաների մոտ ցանկություն առաջացնել իմանալու, հասկանալու և իրական իրավիճակներում կիրառելու ձեռք բերած բարոյական գիտելիքները,
- դաստիարակել ծանր իրավիճակներում պայքարելու և դիմակայելու կարողություն, օրինակներ բերի այն մարդկանց կյանքից, ովքեր կարողացել են գոյատևել նմանատիպ իրավիճակներում, աշակերտների մոտ իրենց անձի նկատմամբ հետաքրքրություն և ինքնակատարելագործման ցանկություն առաջացնել.
- զարգացնել աշակերտի կամային հատկանիշներն և սեփական ուժեղ ու թույլ կողմերի նկատմամբ քննադատական մտածողությունը,
- այդ ուղղությամբ համագործակցել ծնողների և մանկավարժների հետ՝ կիրառելով համագործակցության տարբեր ձևերը,
- դրական վերաբերմունք ձևավորել ընտանեկան սովորույթների, ազգային ավանդույթների նկատմամբ, դաստիարակին լսելու, ընկալելու ունակություն և հասկանալու ու հետևություններ անելու հմտություններ,
- ուսումնասիրել աշակերտների կյանքի առաջնային և բարոյական արժեքները, անցկացնել դասղեկական ժամեր՝ նվիրված բարոյական խնդիրներին տարիքային բոլոր փուլերում,
- աշակերտների կամային հատկանիշները զարգացնելու նպատակով անցկացնել ինքնազարգացման գործնականաշխատանքներ,
- աշակերտների հետ ուսումնասիրել իրենց երկրի, աշխարհի ժողովուրդների, իրենց ընտանիքների և դպրոցի ավանդույթները,
- բոլոր դաստիարակչական միջոցառումներն ուղղել մարդասիրական, պաշտպանված, անվտանգ, երկկողմանի

պատասխանատվության միջավայրի ստեղծմանը, որը հնարավորություն կտա յուրաքանչյուր երեխային՝ հասկանալու իր դերն ու կարևորությունը,

- ❖ դաստիարակչական աշխատանքի միջոցով երեխաներիմեջ ձևավորել հիվանդներին և թույլերին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու և բարեգործությամբ զբաղվելու ցանկություն:

Աշակերտների ինտելեկտուալ հմտությունների զար-գացում

Դասղեկի աշխատանքի կարևոր ուղղություններից է նաև դասարանի աշակերտների ինտելեկտուալ հմտությունների զարգացումը:

Ի՞նչ է ինտելեկտը: Հայտնի հոգեբան Ս. Լ. Ռուբինշտեյնը ինտելեկտը դիտում էր իբրև մարդու վարքագիծ: Նա գտնում էր, որ մարդու ինտելեկտն է բնութագրում նրա վարքը: Ինտելեկտի հիմքը մարդու ճիշտ վարքագիծնէ ըստ իրավիճակի: Ինտելեկտի զարգացումը պետք է հասկանալ բառի լայն իմաստով: «Այդ ուղղությամբ դասղեկիաշխատանքի նպատակն է՝ աշակերտների մեջ զարգացնել՝ նպատակամղված գործելակերպ, ճիշտ մտածելակերպ, շրջապատում իրեն ճիշտ դրր-սևորելու կարողություն: Կարևոր է որոշել նաև աշակերտիիրական ինտելեկտուալ հնարավորությունները և խթանել նրա մտավոր զարգացմանը:

Այս ուղղությամբ աշխատելիս անհրաժեշտ է.

- ✓ ուսումնասիրել դասարանի ուսումնական գործունեության առանձնահատկություններն ամբողջությամբ և յուրաքանչյուր աշակերտի կարողություններն առանձին-առանձին,
- ✓ մանկավարժների և աշակերտների համատեղ գիտելիքների ուսումնասիրության հիման վրա որոշել աշակերտների հետ աշխատանքի մեթոդներն ու եղանակները, անհատական աշխատանքի ձևերը՝ ինչպես դասի ընթացքում, այնպես էլ դասերից դուրս,

- ✓ ուսումնասիրել և ազդել աշակերտների մտահորիզոնի ընդլայնման, նրանց ճանաչողական հետաքրքրությունների և զբաղմունքների վրա, իր ուսումնասիրությունների արդյունքները օգտագործել դպրոցական և արտադպրոցական աշխատանքները կազմակերպելիս
- ✓ տվյալ ուղղությամբ խորհրդատվական աշխատանքներկազմակերպել և անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել երեխաների ընտանիքներին, արտադասարանական միջոցառումների օգնությամբ նպաստել աշակերտների մտավոր զարգացմանը: Այստեղ գլխավոր գործառույթներից մեկը «Դասարանի ին-տելեկտուալ անձնագրի» ստեղծումն ու նրա մշտական կատարելագործումն է, որտեղ պետք է նշել.

ա) աշակերտների ընդհանուր ուսումնական հետաքրքրությունները,

բ)աշակերտների վերաբերմունքն ուսումնական գործընթացի և առանձին առարկաների նկատմամբ

գ)աշակերտների ընդհանուր ուսումնական հմտությունների ու կարողությունների զարգացման աստիճանը,

դ)աշակերտների ինտելեկտուալ զարգացման աստիճանը

ե)ուսման գործընթացում աշակերտների ընկալունակու-թյան աստիճանը,

զ)աշակերտների աշխատունակության և կազմակերպվածության աստիճանը

է)մշտապես ուսումնասիրել աշակերտների՝ ուսման գոր-ծընթացից ետ մնալու պատճառները:Դրա համար անհրաժեշտ է կարևորել հետևյալ չափանիշ-ները,

- ❖ երեխաների առողջական վիճակը,• գիտելիքները թերի յուրացնելու պատճառները,

- ուսման ընթացքում ուսուցչի և աշակերտի համագործակ-ցության առանձնահատկությունները,
- աշակերտի կամային հատկանիշների ձևավորումն ու զարգացումը, դրանց ազդեցությունը ուսումնական գործընթացի վրա,
- երեխայի մտածելակերպի առանձնահատկությունները,
- թույլ աշակերտների՝ ետ մնալու պատճառների ուսումնասիրության հիման վրա դասավանդող ուսուցիչների հետ ստեղծել խմբեր՝ երեխաների առաջընթացն ապահովելու նպատակով,
- աշակերտների հետ անհատական զրույցների և ուսուցիչների խորհրդակցությունների ժամանակ քննարկել աշխատանքի արդյունքները,
- դասերին հաճախել այն ծրագրով, որն անմիջականորեն կապված է տվյալ դասարանի դաստիարակչական աշխա-տանքների պլանի հետ,
- երեխաների ինտելեկտուալ և ճանաչողական հետաքրքրությունների զարգացման համար կազմակերպել զան-զան մրցույթ-վիկտորինաներ, ինտելեկտուալ խաղեր, խաղ ճանապարհորդություն, ընթերցանության երեկոներ, գիտական գաղափարների պաշտպանություն և այլն,
- դաստիարակչական աշխատանքում օգտագործել երկխոսական և տրամաբանական ուսուցման ձևը, երեխաներին սովորեցնել անկաշկանդ և ճիշտ արտահայտել մտքերը, ապացուցել և հիմնավորել դրանք,
- այս ծրագիրն իրագործելու համար համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ և ստեղծել համապատասխան իրավիճակներ՝ աշակերտների ինտելեկտուալ հմտությունները ցուցադրելու համար

(դպրոցական օլիմպիադաներ, խմբակներ, վիկտորինաներ),

- աշակերտների ընդունակություններն հաշվի առնելով՝ օգնել նրանց՝ ճիշտ կողմնորոշվելու ապագա մասնագիտության ընտրության հարցում: Այս ուղղությունը դասղեկն իրականացնում է մի քանի տարիների ընթացքում: Տարբեր տարիքային փուլերում նա իր աշակերտների հետ զանազան խնդիրներ է լուծում, որոնց հիմնական նպատակն է զարգացնել աշակերտների ռեֆ-լեքսային հմտությունները: Այդ հմտությունները կօգնեն աշակերտին զարգացնել ինքնագնահատման, ինքնաքննա-դատության և ինքնակատարելագործման հնարավորությունները: Աշակերտի ռեֆլեքսային հմտությունների բա-ցահայտումն սկսվում է դրանց ուսումնասիրությամբ, որը մեծ բարդություն չի ներկայացնում և միաժամանակ ուսուցչին հնարավորություն է տալիս որոշելու երեխաների մտավոր հնարավորությունները: Այդ տեսության խնդիրն է որոշել երեխայի ինքնակրթության և ինքնադաստիարակման հնարավորությունները: Աշակերտի ռեֆլեքսային հմտությունների բացահայտումն սկսվում է դրանց ուսումնասիրությամբ, որը մեծ բարդություն չի ներկայացնում և միաժամանակ ուսուցչին հնարավորություն է տալիս որոշելու երեխաների մտավոր հնարավորությունները: Այդ տեսության խնդիրն է որոշել երեխայի ինքնակրթության և ինքնադաստիարակման հնարավորությունները: Դասղեկի աշխա-տանքն այդ ուղղությամբ սկսվում է առաջին հերթին աշակերտի՝ ուսուցման և ուսումնական առարկաների նկատմամբ վերաբերմունքի

ուսումնասիրությունից: Դա հնարավորություն է տալիս բացահայտելու աշակերտների ուսումնական հետաքրքրությունները, ճշտելու այդ դասարանում մանկավարժների գործունեության որակը:

Արտադասարանական աշխատանքների կազմակեր-պում

Երեխայի դաստիարակության համար մեծ նշանակություն ունեն նաև արտադասարանական աշխատանքները: Շատ երեխաների համար դա դպրոց գալու ևս մեկ առիթ է, և հնարավորություն է տալիս վատ սովորող աշակերտին վերագտնել ինքն իրեն: Մանկավարժը չպետք է բաց թողնի այդ հնարավորությունը. չէ որ դասերից հետո դասարանի կյանքին մասնակցելը հնարավորություն է տալիս երեխա-յին բացահայտել ինքն իրեն, իր վրայից հանել «անպիտա-նության» պիտակը և իր ուրույն տեղը գտնել հասակակից-ների կողքին: Այս ուղղությամբ դասղեկի աշխատանքում մի շատ կարևոր պահ կա. նա պետք է ազատ ընտրության ի-րավիճակներ ստեղծի, երբ երեխաներն իրենք են ընտրում արտադասարանական աշխատանքի ձևերը, որոնք կուզեին իրականացնել: Ինքնուրույնությունն ու նախաձեռնելու ու-նակությունը, պատասխանատվության զգացումն ու ան-կեղծությունը, ուրիշների հետ համագործակցելու կարո-ղությունը. սրանք այն հատկանիշներն են, որոնք դասղեկը պետք է զարգացնի իր սաների մեջ:

Այս ուղղությամբ աշխատելիս անհրաժեշտ է,

- ուսումնասիրել աշակերտների անհատական հետաքրքրություններն ու պահանջները արտադասարանական գործունեության ընթացքում,
- արտադասարանական աշխատանքի առավել ակտիվ ձևեր կիրառել՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները,
- օգնել երեխաներին խմբակների, ակումբների, սեկցիաների ընտրության հարցում,

- ծնողներին, մանկավարժներին և հասակակիցներին մըշ-տապես ցուցադրել արտադասարանական գործունեության հաջողություններն ու արդյունքները,
- սովորեցնել անաչառորեն գնահատել սեփական ձեռքբերումները և արդարացի լինել ուրիշների հաջողությունների նկատմամբ,
- դասարանական և համադպրոցական միջոցառումներիծրագիրը կազմելիս՝ հաշվի առնել երեխաների՝ հետաքրքրություններն ու ցանկությունները,
- աշակերտներին հնարավորություն տալ՝ ինքնուրույն պլանավորել՝ դասարանի արտադպրոցական գործունեությունը և պատասխանատու լինել դրա կատարման համար,
- արտադասարանական խմբերի աշխատանքի արդյունավետությունը գնահատելիս՝ հաշվի առնել աշակերտների կարծիքը
- ներկայացնել ծնողներին իրենց երեխաների դպրոցական և արտադպրոցական գործունեությունը, ցուցադրել ծնողներին երեխաների հաջողություններն ու ձեռքբերումները,
- աշակերտների հաջողությունները ներկայացնել արտադասարանական միջոցառումների ժամանակ։

<u>Ընտանիք-դպրոց համագործակցության կազմակեր-պում</u>

Այս ուղղությամբ դասղեկը կարող է աշխատանքը հաջո-ղությամբ իրականացնել, եթե դպրոցը համագործակցի ըն-տանիքի հետ։Շատ հաճախ երեխայի դաստիարակության գործընթացն իրականացվում է այդհամագործակցությու-նից դուրս, որը, ցավոք, տխուր հետևանքներ է ունենում։Արդեն ապացուցված է, որ դաստիարակությունը հաջողություն է ունենում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքն ու երեխայիդաստիարակությունը կատարվում են միաժամանակ։ Դրա համար դասղեկը պետք է ծնողների հետ նախապատրաստական

գործունեություն ծավալի, քանի որ այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ հիմնա-կան աշխատանքի, հնարավոր չէ արդյունավետ աշխատել դասարանի հետ: Չ՞է որ աշակերտների ընտանիքները նույ-նանման չեն, տարբեր են նրանց սոցիալական պայմաննե-րը, երեխաների նկատմամբ վերաբերմունքն ու բարոյա-կան նորմերը: Իսկ այդ ամենն ազդում են երեխայի առող-ջության, հոգեվիճակի, ուսման և իքնուրույնության վրա: *Այս ուղղությամբ աշխատելիս անհրաժեշտ է.*

- ծանոթանալ իր աշակերտների ընտանիքների հետ,
- ծնողական ժողովների, թեմատիկ և անհատական խորհրդատվության միջոցով ծնողների համար կազմակերպել հոգեբանամանկավարժական զրույցներ, սեմինարներ:
- կազմակերպել հանդիպումներ այն մարդկանց հետ, ովքերդրական ազդեցություն ունեն երեխայի վրա,
- անցկացնել միջոցառումներ ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ,
- ցուցադրել և ոգևորել՝ դասարանի և դպրոցի կյանքին ակտիվորեն մասնակցող ծնողների անհատական նախաձեռնությունները,
- դպրոցի հոգեբան-մանկավարժների հետ սովորեցնել ծնողներին հաղթահարել և կանխարգելել ընտանեկան կոնֆլիկտները, հարթել երեխաների և ծնողների միջև եղած տարաձայնությունները,
- ստեղծել ծնողների մասնագիտական բանկ և այդ տվյալներն օգտագործել <<ծնողական համալսարանի>> դասընթացները կազմակերպելիս,
- ծանոթանալ աշակերտների ընտաիքների հետ, ուսումնա-սիրել երեխաների դրությունը՝ ընտանիքում և նրանց կյանքի պայմանները,
- հաճախակի անցկացնել ծնողական ժողովներ, որոնց թեմաների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել

երեխաների տարիքային և անհատական առանձնա-հատկությունները, դասարանի և դպրոցի խնդիրները,

- ❖ ըստ անհրաժեշտության՝ ծնողների համար անցկացնել անհատական և խմբային խորհրդատվություններ,
- ❖ դասարանի ծնողներին ներգրավել բոլոր տեսակի դասարանական աշխատանքների մեջ,
- ❖ կազմակերպել երեխաների և ծնողների համատեղ ստեղծագործական գործունեություն,
- ❖ խրախուսել դպրոցի և դասարանի կյանքում ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողներին։Ծնողների և ուսուցիչների իսկական համագործակցությանը միշտ էլ հետևում են դրական արդյունքներ՝
- ❖ ձևավորվում է փոխադարձ վստահություն,
- ❖ ծնողները կուսուցիչներն աշխատում են որպես մեկ խումբ, որպեսզի յուրաքանչյուր երեխայի համար ստեղծեն եզակի նհետաքրքիր ուսուցման փորձառություն,
- ❖ երեխաները շահում են մեծահասակների համագործակցող խմբի առկայությունից:

Քաղաքացիական դաստիարակության իրականացում

Այս ուղղությամբ դասղեկի աշխատանքի նպատակն է ի-րականացնել քաղաքացիական դաստիարակություն, զի-նել երեխաներին իրավունքի, իրավական նորմերի, անհա-տի և պետության հարաբերությունների վերաբերյալ համա-պատասխան գիտելիքներով, զարգացնել պետական մտա-ծողություն: *Այս ուղղությամբ աշխատելիս անհրաժեշտ է.*

- ➢ զարգացնել քաղաքացիական արժեքներ և բարոյական դիրքորոշումներ,
- ➢ հասարակության մեջ և իրավական հարաբերություններում ձևավորել իրավական կուլտուրա, օգնել այդ

հարաբերություններում երեխայի ինքնահաստատմանը, երեխաների մոտ ձևավորել՝ մարդասիրական աշխարհայացք, ինչ-պես նաև սեփական իրավունքների գիտակցում,երեխաներին ծանոթացնել իրավական խնդիրներին ու կարևոր հարցերին,

- առանձնահատուկ վերաբերմունք ձևավորել պետության, պետական խորհրդանիշերի նկատմամբ,
- զարգացնել քաղաքացու այնպիսի որակներ,ինչպիսիք են՝ կամավորությունը, համագործակցությունը, մասնակցությունը, հանդուրժողականությունը, քննադատական մտա-ծողությունը, իքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունը, բանավիճելու հմտությունը,
- սովորեցնել ուսումնասիրել, բացահայտել և լուծել համայնքային հիմնախնդիրներ,
- ուսուցանել համայնքային ծառայությունների մատուցում,
- երեխաներին սովորեցնել պետական իրավական նորմերն ու օրենքները, ձևավորել պատասխանատվություն այդ օրենքների ու նորմերի նկատմամբ,
- երեխաների իրավական գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման նպատակով կազմակերպել արտադասարանական միջոցառումներ,
- աշակերտներին իրավական գիտելիքներով զինելու նպատակով համագործակցել իրավական մարմինների հետ, երեխաների մոտ ձևավորել բարոյաիրավական հատկանիշներ (խիղճ, պատասխանատվություն, արդարություն, պատիվ, արժանապատվություն և այլն),
- անցկացնել թեմատիկ դասղեկական ժամեր,
- կազմակերպել հանդիպումներ իրավական և իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ,
- այցելել զորամասեր,

- կազմակերպել մրցույթներ և վիկտորինաներ իրավական թեմաներով:

Դասղեկական ժամերի կազմակերպումն ու անցկացումը

Դասղեկի ժամերի ձևերը

Արտադասարանական դաստիարակության կարևոր ձե-վերից մեկը դասղեկի ժամն է: Աշակերտներն ու դասղեկը միասին են որոշում,թե ինչ հարցեր պետք է քննարկեն դաս-ղեկի ժամի ընթացքում:Դասղեկի ժամը աշակերտների և դասղեկի անմիջական շփման եղանակներից մեկն է:Դասղեկի ժամերը կարելի է անցկացնել տարբեր ձևերով, օ-րինակ՝ դասարանական հավաքույթներ, թեմատիկ զրույց-ներ, բանավեճեր, էքսկուրսիաներ, աշակերտների ինքնա-հաշվետվություններ, դաստիարակչական ժամեր և այլն: Նմանատիպ միջոցառումները պլանավորվում են դասղեկի և աշակերտների համատեղ ջանքերով: Դասղեկը, անցկացնելով դաստիարակչական ժամ կամ դա-սարանական ժողով, տարբեր խնդիրներ է արծարծում, որո-շում տվյալ ժամի բովանդակությունը, անցկացման ձևն ու եղանակները:Ասպիսով, դասղեկի ժամը՝ դաստիարակչա-կան աշխատանքի մի ձև է, որը նպաստում է երեխաների աշխարհընկալման զարգացմանը՝դաստիարակության գոր-ծընթացին մասնակից դարձնելով նաև հենց իրենց՝ աշա-կերտներին:Նմանատիպ միջոցառումները պլանավորվում են դասղեկի և աշակերտների համատեղ ջանքերով:Դասղեկական ժամը կատարում է հետևյալ գործառույթները.

- ✓ Տեղեկատվական
- ✓ կողմնորոշիչ

- ✓ ուղղորդող
- ✓ ձևավորող

Տեղեկատվական գործառույթի էությունն այն է, որ դասղեկի ժամը հնարավորություն է տալիս ընդայնելու այն աշա-կերտների գիտելիքների պաշարը, ովքերուսումնական ծրագրերում չեն գտել իրենց հետաքրքրող հարցերի պա-տասխանները: Դրանք կարող են լինել տեղեկություններ ի-րենց հայրենի երկրում, քաղաքում կամ արտերկրում կա-տարվող իրադարձությունների մասին: Դասղեկի ժամին քննարկման առարկա կարող է լինել ցանկացած երևույթ կամ իրադարձություն:

Կողմնորոշիչգործառույթը նպաստում է երեխաների մոտ շրջապատող իրականության և հոգևոր արժեքների նկատ-մամբ որոշակի վերաբերմունքի ձևավորմանը, օգնում ճիշտ գնահատել երևույթները:

Լուսավորչական *և* **կողմնորոշիչ** գործառույթները անքակ-տելիորեն կապված են միմյանց, քանի որ հնարավոր չէ սո-վորեցնել երեխաներին գնահատել երևույթները, որոնք նը-րանց անծանոթ են: Սակայն երբեմն դասղեկական ժամը՝ հստակ կողմնորոշիչ գործառույթ է իրականացնում, երբ քն-նարկվում են շատ հայտնի իրադարձություններ:

Ուղղորդողգործառույթը կոչված է այս կամ այն երևույթի քննարկումը կատարելու աշակերտների՝ գործնական փոր-ձի հիմանվրա:Ձևավորող գործառույթն իրականացնում է բոլոր վերոհիշյալ գործառույթները միասին: Այն աշակերտ-ների մոտ զարգացնում է տրամաբանելու ունակությունն-ը, ինքնագնահատման կարողությունները, օգնում է մտքե-ը ճիշտ ձևակերպելուն և արտահայտելուն, ինչպես նաև սովորեցնում պաշտպանել սեփական տեսակետը:Դասղեկի ժամը կարող է տարբեր ձևեր ունենալ՝ կախված կոլեկտիվի զարգացվածության աստիճանից և աշակերտ-ների տարիքային

առանձնահատկություններից: Կարելի է առանձնացնել դասղեկի ժամի հետևյալ ձևերը.

- ✓ զրուցներ (գեղագիտական, բարոյագիտական
- ✓ բանավեճեր
- ✓ հանդիպումներ հետաքրքիր մարդկանց հետ
- ✓ վիկտորինաներ
- ✓ քննարկումներ տարբեր թեմաներով
- ✓ ինտերակտիվ խաղեր
- ✓ թատերական ներկայացումներ
- ✓ կինոդիտումներ

Դասղեկի ժամերի կազմակերպման և անցկացման մեթոդիկան

Դասղեկի ժամի բովանդակությունն ու անցկացման մեթոդ-ները սերտորեն կապված են միմյանց հետ։Բովանդակությունն ու դասղեկի ժամի անցկացման մեթո-դիկան կախված են աշակերտների տարիքից, ինչպես նաև դասղեկի՝ իր առջև դրած խնդիրներից ու նպատակներից: Դաղեկի ժամի թեմաների և բովանդակության ընտրության ընթացքում դասղեկը պետք է հաշվի առնի աշակերտներիտարիքային առանձնահատկությունները, նրանց բարոյական պատկերացումները, հետաքրքրությունները և այլն։ Դա կարելի է կատարել, օրինակ, զրույցի կամ հարցաթերթիկի միջոցով: Դասղեկի ժամի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է.՝

- ✓ ընտրել թեման և առանձնացնել նպատակը
- ✓ ընտրել թեմային համապատասխան նյութ,
- ✓ կազմել դասղեկական ժամի անցկացման պլան
- ✓ աշակերտներին տալ համապատասխան հանձնարարություններ,

- ✓ ապահովել մանկավարժների և ծնողների մասնակցությունը տվյալ դասղեկի ժամին: Այսպիսով, դասղեկի ժամը կարելի է անցկացնել տարբեր ձևերով, և դասղեկի խնդիրն է այդ ձևերն իրենց բովանդակությամբ և անցկացման մերոդիկայով դարձնել ավելի բազմազան դրան զուգահեռ հասնելով դաստիարակչական որոշակի և կարևոր խնդիրների լուծմանը: «Դաստիարակության մեթոդները ունեն անձնավորության մեջ դրական փոփոխությունների իրականացման ուղղվածություն, սակայն դրանց կիրառումը անմիջականորեն չէ, որ փոփոխություններ է կատարում, այլ դաստիարակվողների մեջ առաջացնում մտքեր, զգացմունքներ, պահանջմունքներ, որոնք էլ նրանց որոշակի վարքի և արարքների են մղում»

Դասղեկի ժամերի նշանակությունը

Դասղեկի ժամը երեխաների կյանում մեծ դեր է խաղում, ե-թե այն հետաքրքիր և յուրօրինակ է կառուցված: Լավ կազ-մակերպված ու մտածված դասղեկական ժամը ունի մի շարք առավելություններ. Դասղեկի ժամի շրջանակներում հնարավոր է լինում միա-ժամանակ շփվել դասարանում բոլոր աշակերտների հետ, լսել նրանց յուրաքանչյուրի կարծիքը: Դասղեկի ժամի ընթացքում դասղեկը՝ որոշակի պայման-ներ է ստեղծում, որոնց միջոցով կարողանում է կանխորո-շել դաստիարակչական աշխատանքի արդյունավետությու-նը: Դասղեկի ժամը, որի ընթացքում տարբեր խնդիրներ ենլուծվում,հնարավորություն է տալիս տեսնել երեխաներին հաղորդակցման բնական մթնոլորտում և շատ լուրջ բարո-յական խնդիրներ լուծել: Դասղեկի ժամերը կարևոր են նաև նրանով, որ անց են կաց-վում ամեն շաբաթ: Դասղեկի ժամը պետք է անցկացվի անմիջական շփման ձևով. դասղեկը պետք է հնարավորություն տա աշակերտներին՝ անկաշկանդ արտահայտելու

իրենց կարծիքը, քննադատությունը: Դասղեկի ժամերին երեխաների ազատ ու անկաշկանդ հա-ղորդակցումը նպաստում է այն բանին, որ նրանց մոտ մե-ծանում է դպրոցական կյանքին մասնակցելու ցանկությու-նը, մղում է ինքնակատարելագործման ու ինքնազարգաց-ման: Որպեսզի դասղեկական ժամերը հետաքրքրեն բոլոր աշակերտներին, և նրանք ցանկություն հայտնեն մասնակ-ցելու դրանց նախապատրաստման աշխատանքներին, կա-րելի է երեխաներին հայտնել բոլոր դասղեկական ժամերի թեմա-ները և նրանցից յուրաքանչյուրին հնարավորություն տալ մասնակցելու այն ժամերի նախապատրաստմանն ու անցկացմանը, որոնք հետաքրքրում են նրանց: Աշակերտների խումբը, դասղեկական ժամին պատրաստ-վելիս, եղած նյու-թերը վերլուծում է դասղեկի հետ, մշակումհամապատաս-խան պլան:Դասղեկի ժամի հաջողությունը կախված է դասղեկի բազմակողմանի զարգացված լինելուց, աշակերտների նկատմամբ ունեցած նրա հոգատարությու-նից ու մեծ սիրուց:

Խորհուրդներ դասղեկի ժամերի կազմակերպմանվերաբե-րյալ

- ✓ Մի՛ վիրավորեք ու նվաստացրեք երեխաներին, ձեր դժգոհությունն ավելի լավ է արտահայտեք ձեր բարի ու հարգալից զրույցների միջոցով:
- ✓ Շատ ժամանակ անցկացրեք դասարանի հետ:
- ✓ Դասալսումների գնացեք տարբեր առարկաներից:
- ✓ էքսկուրսիաներ ու հետաքրքիր միջոցառումներ կազմակերպեք:
- ✓ Մտերմիկ զրույցներ ունեցեք երեխաների հետ:
- ✓ Ճշտեք ուժերի բաշխվածությունը դասարանում, ովքե՞ր են դասարանում առաջնորդները, ի՞նչ խմբավորումներ կան
- ✓ Ճիշտ գնահատեք յուրաքանչյուրի ուժեղ կողմերը և արդյունավետ կառավարեք դրանք:

- ✓ Երեխաներին սովորեցրե՛ք ինքնուրույն լինել:
- ✓ Անաչառ ու արդարամիտ եղե՛ք ամենքի և ամեն ինչի նկատմամբ:

Եթե մանկավարժությունը ցանկանում է մարդուն դաս-տիարակել բոլոր տեսակետներից, ապա նա պետք է նախ նրան ճանաչի բոլոր տեսակետներից:

Կ.Դ. Ուշինսկի

Եզրակացություն

Դասղեկի ժամերի բովանդակությունն անհրաժեշտ է կա-ռուցել այնպես, որ հնարավոր լինի աստիճանաբար երե-վույթների նկարագրությունից անցնել դրանց՝ գնահատ-մանը, անհատական մեկնաբանություններին: Առաջադրր-ված խնդիրների քննարկման ընթացքում դասղեկը պետք է շատ ուշադիր լինի աշակերտներիկարծիքների նկատ-մամբ, ուղղումներ՝ կատարի լրացուցիչ հարցեր առաջադրի, երեխաների ուշադրությունը կենտրոնացնի կարևոր պահե-րի վրա, օգնի երեխաներին՝ գտնելու խնդիրների ճիշտ լու-ծումներ: Պետք է հաշվի առնել աշակերտների՝ նյութի ըն-կալման հոգեբանական առանձնահատկությունները, նը-րանց ուշադրությունը պահել կենտրոնացած,իսկ հետա-քրքրության անկման դեպքում օգտագործել առավել հե-տաքրքիր բովանդակությամբ նյութեր կամ սուր հարցադ-րումներ անել, երաժշտական դադար տալ, փոխել գործու-նեության ձևը և այլն:

Օգտագործված գրականություն

Մուրադյան ՌուզաննաՄ 992 Դասղեկ: Նոր մոտեցումներ դաստիարակչական աշխատանքներում: - Եր. Գիտություն, 2007, 192 էջ